ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 օգոստոսի 2016 թվականի N 73-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻ ԽՈՒՄԲ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՇՆՈՐՀԱԿԱԼԱԳՐՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Կրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 5-րդ կետով, համաձայն ՀՀ Սյունիքի մարզպետի 2002 թվականի հունվարի 21-ի <<Սյունիքի մարզպետի խրախուսանքի ձևեր հաստատելու մասին>> N 7-Ա որոշմամբ հաստատված կարգի, **որոշում եմ՝**

1. Մատաղ սերնդի կրթության և դաստիարակության գործում ներդրած ավանդի, երկարամյա անբասիր մանկավարժական գործունեության համար Կապանի թիվ 2 ավագ դպրոցի աշխարհագրության ուսուցիչ Հայկ Հակոբյանին, Սառնակունքի միջնակարգ դպրոցի հայ գրականության ուսուցչուհի Նվարդ Աթայանին, Սիսիանի ավագ դպրոցի քիմիայի ուսուցչուհի Նելլի Գալստյանին, Գորիսի թիվ 4 ավագ դպրոցի պատմության ուսուցիչ Վլադիմիր Դոլունցին և ֆրանսերենի ուսուցչուհի Անահիտ Մարգարյանին պարգևատրել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի շնորհակալագրով :
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2016թ. օգոստոսի 25
ք. Կապան